ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՌԵՎԱՆՇՇԻՆ ՍՊԸ-ն ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-26/29 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Baymak	Baymak	Baymak	Թուրքիա	Գազի կաթսա՝ երկկոնտուր, կոնդենսացիոն, փակ այրման խցիկով, տուրբո, պատի վրա տեղադրվող, նոր և չօգտագործված: Ջեռուցման անվանական օգտակար ջերմային հզորությունը՝ ոչ պակաս, քան 40 կՎտ՝ արտադրողի կողմից սահմանված և տեխնիկական անձնագրով հաստատված ջերմաստիճանային ռեժիմում: Էլեկտրական սնուցումը՝ 220–240 Վ, 50 Հց: Ջեռուցման կոնտուրի ջերմաստիճանի կարգավորման միջակայքը՝ առնվազն 30–80 °C: Տաքացվող մակերեսը

						350-400քմ:Կաթսան պետք է ունենա երկու առանձին ջերմափոխանակիչ՝ ջեռուցման և կենցաղային տաք ջրի պատրաստման համար: Այրման խցիկը՝ փակ, ծխագազերի հարկադիր հեռացմամբ: Կաթսան պետք է ունենա կոնդենսացիոն համակարգ՝ այրման արգասիքներում առկա ջերմության լրացուցիչ օգտագործման և առաջացած կոնդենսատի հեռացման հնարավորությամբ: Կաթսան պետք է աշխատի բնական գազով և համապատասխանի ՀՀ-ում կիրառելի անվտանգության ու տեխնիկական պահանջներին: Կաթսան պետք է ունենա ավտոմատ կառավարման համակարգ և պաշտպանություն գերտաքացումից, այրման խափանումներից ու ջերմակրի անբավարար ճնշումից,ունենա խելացի ղնայողության համակարգեր:Կոմպլե կտայնությունը՝ գործարանային ամբողջական համալրում(ծխատար կից դետալներ) համաձայն արտադրողի տեխնիկական անձնագրի: Մատակարարված կաթսայի երաշխիքային ժամկետը

					կազմում է ոչ պակաս, քան 36 ամիս և հաշվարկվում է պատվիրատուի կողմից ապրանքի ընդունումը հաստատող փաստաթղթի ստորագրման օրվանից: Կաթսայի տեղադրումը, միացումը, կոաքսիալ ծխատարի տեղադրումը, կոնդենսատի հեռացման համակարգի միացումը, գործարկումը, կարգաբերումը, աշխատանքային փորձարկումը և շահագործման հրահանգավորումը ներառված են ապրանքի արժեքում և իրականացվում են մատակարարի կողմից՝ կողմերի միջև համաձայնեցված օրը և ժամին:Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը կատարում է մատակարարը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ՌԵՎԱՆՇՇԻՆ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-26/29 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					